

Պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն

Դասախոսի անուն, հայրանուն, ազգանուն՝ Լիլիթ Անտոնի Ասոյան

Ծննդյան վայրը, տարեթիվը՝ ք.Լենինական, 1975թ.

Կրթությունը՝ բարձրագույն

1982-1991թթ. սովորել է Ս.Օրջոնիկիձեի անվան ռուսական դպրոցում, 1992թ. գերազանցությամբ ավարտել Ախրուրյանի Ն.Ադրայանի անվան ազգային վարժարանը:

1992-ին ընդունվել և 1997թ. գերազանցությամբ ավարտել է Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության բաժինը:

1997-ին հայցորդ է ձևակերպվել ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում՝ ակադեմիկոս Հ.Ա.Ավետիսյանի ղեկավարությամբ:

2006-ին պաշտպանել է թեկնածության ատենախոսությունը՝ «Հայերի տեղաբաշխումը Ռուսական կայսրությունում ըստ 1897թ. Համառուսաստանյան մարդահամարի տվյալների» թեմայով:

2005թ. մանակցել է Կրթության ազգային ինստիտուտի և Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմի համատեղ կազմակերպված դասընթացին՝ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայից (Գյումրի):

2008թ-ին մանակցել է ՀՀ Կրթության և գիտության նախարարություն և ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթության բաժնի կողմից կազմակերպված դասախոսների որակավորման բարձրագույն դասընթացին «Հայոց պատմություն» առարկայից (Երևան):

2008-ին, 2009-ին և 2011-ին մանակցել է Համալարանակն կրթությամբ կանանց ասոցիացիայի կողմից անցկացված «Կանանց լիդերության դպրոց» դասընթացներին (Երևան):

2013-ին մասնակցել է Տարածաշրջանային իրադարձությունների գիտավերլուծական կենտրոնի կողմից անցակցված «Հարևաններ. հայացք Հայաստանից» քաղաքագիտության դասընթացին (Երևան):

2013-ին մանակցել է ՌԴ Սանկտ-Պետերբուրգի Արտաքին կապերի կոմիտեի կողմից անցկացված «Ռուսաստանի պետության պատմություն» 10-րդ կրթական ծրագրին (ՌԴ, Սանկտ-Պետերբուրգ):

2014թ-ին վերապատրաստում է անցել Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում «Ինչպես դասավանդել հայոց ցեղասպանության թեման» ամառային դպրոցում (Երևան):

2015թ-ին մասնակցել է Հայաստանի ամերիկյան համալսարանում անցկացված «Սոցիալ-քաղաքական զարգացման մարտահրավերները հետզհետեային հասարակություններում» պատմաքաղաքագիտական դասընթացին (Երևան): Ինչպես նաև մասնակցել է մի շարք հանրապետական և միջազգային գիտաժողովների Հայաստանի հանրապետությունում (Երևան, Ծաղկաձոր, Իջևան), Ռուսաստանի դաշնությունում (Մոսկով, Մոսկվա, Սանկտ-Պետերբուրգ), Վրաստանում (Թելավի), Ուկրաինայում (Սումի): Մասնակից է նաև Երիտասարդ եվրասիական պատմաբանների ակումբի նիստի (Երևան, 2014), Երիտասարդ պրոֆեսիոնալների ակումբի նիստի (ՌԴ, Մոսկով, 2015), Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի նիստի (Երևան, 2015), Քաղաքագետների համառուսաստանյան 7-րդ հոբելյանական կոնգրեսի (ՌԴ, Մոսկվա) և այլ միջազգային գիտաժողովների:

Գիտական առիճան` պատմական գիտությունների թեկնածու:

Գիտական կոչում` դոցենտ:

Օտար լեզուների իմացություն` ռուերեն, գերմաներեն, վրացերեն

Աշխատանքային փորձ` Շուրջ 20 տարի` 1997 թվականից աշխատում է հայրենի ուսումնական հաստատությունում` Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում` որպես Պատմության, իրավագիտության և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս:

1997-1999 թվականներին աշխատել է նաև Գյումրու Ա.Պետրոսյանի անվան թիվ 10 միջնակարգ դպրոցում` որպես պատմության ուսուցիչ, 1999-ից մինչև 2007 թվականը` Գյումրու «Իմաստասեր Անանիա Շիրակացի» համալսարանում` որպես պատմության և քաղաքագիտության դասախոս:

Մերտորեն համագործակցում և անցկացնում է համատեղ միջոցառումներ Հայաստանի հանրապետությունում Ռուսաստանի դաշնության դեսպանատան հետ (Երևան), Գյումրիում ՌԴ հուպատոսարանի, Մշակույթի և գիտության ռուսաստանյան կենտրոնի հետ (Երևան), իսկ 2015 թվականից՝ նաև ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի հետ:

2009-2013թթ. ղեկավարել է Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Շիրակի մարզի Քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնը՝ իրականացնելով մի շարք միջոցառումներ Գյումրիում, Արթիկում, Մարալիկում, Ախուրյանում, ինչպես նաև Շիրակի մարզի սահմանամերձ համայնքներում՝ նվիրված կանանց քաղաքական և քաղաքացիական ակտիվության խթանմանը:

2014 թվականից «Վիկտորիա» պատմաբանների ակումբ » պատմամշակութային ՀԿ նախագահն է:

Կարդացվող դարձնագրեր՝ Հայոց պատմություն, Պատմական ժողովրդագրություն, Հայոց պատմության պատմագրություն, Հայ-ռուսական հարաբերություններ, Հայկական հարցի և հայոց ցեղապանության պատմություն:

Հետաքրքրությունների ոլորտ՝ Հայոց պատմության նոր և նորագույն շրջան, Ռուսաստանի պատմության նոր և նորագույն շրջան, հայ-ռուսական հարաբերություններ, ժողովրդագրություն:

Անդամակցություն՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության Կրթության պետական տեսչության ներգրավված մասնագետ հասարակական գիտությունների գծով (2008թ.), ՀՀ Հանրային խորհրդի Ժողովրդագրության հարցերով ենթահանձնաժողովի քարտուղար (2009-ից), Մշակույթի և գիտության ռուսաստանյան կենտրոնին կից «Նովոյե պոկոլենիե» ակումբի անդամ (2013-ից), ՀՀ Հանրային խորհրդի Քաղաքացիական հասարակության կայացման հարցերի հանձնաժողովի անդամ(2014-ից):

Վերջին հրատարակումները՝ Շուրջ 40 գիտական աշխատության հեղինակ է, որից երկու մենագրության՝ «Հայերը Ռուսական կայսրությունում 19-րդ դարի վերջին» (Գյումրի, 2010), «Социально-классовая структура армянского населения Российской империи (по материалам переписи 1897г.)»(Санкт-Петербург, 2015) և «Հայկական հարցի և հայոց ցեղապանության

պատմություն» (Գյումրի, 2007) մեթոդական ձեռնարկի: Նրա մի շարք հրապարակախոսական հոդվածներ, հարցազրույցներ և էլույթներ լույս են տեսել «Ասպարեզ», «Առավոտ», «Друзья России», «Ноев ковчег», Մարդակերտի շրջանի «Ջրաբերդ», ՌԴ Կալուգայի «Գործարար» թերթերում և պարբերականներում, ինչպես նաև aravot.am, blog.news, panorama.am, evrazesnews.ru, ria.ru և այլ կայքերում: 2014թ. որպես Հայաստանի ներկայացուցիչ մասնակցել է Մոսկվա-Երևան-Քիշին-Աստանա-Բաքու-Թբիլիսի РИА-Новости տեղեկատվական գործակալության կողմից կազմակերպված հեռուստակամրջին՝ որպես Հայաստանում «Գեորգիայան ժապավեն» ակցիայի կազմակերպիչ և մասնակից:

Վերջին շրջանում հրատարակված հոդվածներն են՝ «Աշխատանքային միգրացիայի սոցիալ-տնտեսական հետևանքները», (ՀՀ բուհական և տնտեսական համակարգերի փոխազդեցության հիմնախնդիրները: Հանրապետական գիտամեթոդական կոնֆերանսի հոդվածների ժողովածու /19-20 մայիսի 2013//Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, Իջևան, 2013); «К вопросу о значении материалов переписи 1897 года в изучении демографической истории Армении» (Материалы международной научно-практической конференции 29-30 ноября 2013г., Сумы (Украина), ч 1-ая, //ИСТОРИКО-КРАЄЗНАВЧІ ДОСЛІДЖЕННЯ: ТРАДИЦІЇ ТА ІННОВАЦІЇ МАТЕРІАЛИ Міжнародної науково-практичної конференції ЧАСТИНА I, 29-30 листопада 2013 р., Суми); «Первая мировая война и Армянский вопрос» (Телавский государственный университет, сборник научных трудов, N1(28), Тбилиси, 2015); «К вопросу о роли и значении стратегического партнерства в обеспечении информационной безопасности» (Կոնֆրիկտային հաղորդակցություն և տեղեկատվական անվտանգություն, Գիտաժողովի նյութեր, Եր., ՀՀ Նախագահի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ, 2015); «Роль и значение стратегического партнерства в обеспечении информационной безопасности» (Политическая наука перед вызовами современной политики //Материалы VII Всероссийского конгресса политологов, Москва, 19–21 ноября 2015 г., Под общей редакцией О. В. Гаман-Голутвиной, Л. В. Сморгунова, Л. Н. Тимофеевой // Российская ассоциация политической науки (РАПН), Московский государственный институт международных отношений (Университет) МИД России, кн.2-ая, Москва, 2015); «Письменность как определяющий фактор национального самосознания» (Наследие святых Кирилла и Мефодия в истории Русской Церкви и русской культуры //Русский Народный Собор в Армении// <http://www.rnsarm.info/node/53508>).

Պարզևներ և պատվոգրեր՝ 2001թ. տրվել է Շնորհագիր՝ ՀՀ Շիրակի մարզի Ն.Աղբալյանի անվան վարժարանի տնօրինության կողմից՝ ինքնահաստատման ճանապարհին ունեցած ձեռքբերումների համար:

2005թ. պարգևատրվել է Պատվոգրով ՌԴ Արտաքին գործերի նախարարության կողմից՝ «Հայաստանում Ռուսաստանի տարի» միջոցառման շրջանակներում:

2011թ. տրվել է Շնորհակալագիր ՀՀ Շիրակի մարզպետի կողմից՝ «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ հիմնադրման 15-ամյակի կապակցությամբ՝ կանանց քաղաքական, քաղաքացիական ակտիվության բարձրացմանը նպաստելու համար:

2012թ. Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտորատի կողմից արժանացել է Պատվոգրի՝ կանանց տոնի առթիվ:

Անձնական տվյալներ՝ ամուսնացած է, ունի երկու երեխա:

Էլեկտրոնային հասցե՝ lilitasoyan@rambler.ru